ԷԴՈՒԱՐԴ ԲԱԳՐԱՏԻ ԱՂԱՅԱՆ
(1913–1991)

Ժամանակը հաճախ լիցքավորվում է առանձին անհատների ներկայությամբ, գույն ու կոլորիտ ստանում նրանցով: Հենց նրանք էլ հնարավորություն են տալիս՝ իմաստավորելու նաև գալիք ժամանակները:

Լրացավ այդպիսի անհատականություններից մեկի՝ ակադեմիկոս Էդուարդ Բագրատի Աղայանի ծննդյան 100-ամյակը: Ապրելով դժվարին մանկություն ու պատանեկություն՝ նա իր տաղանդով ու մեծ աշխատասիրությամբ հարթեց իր հետագա ուղին, հաստատեց իր տեղը հայագիտության մեջ և դարձավ այդ գիտության ուղենիշներից մեկը: Դեռևս համալսարանական ուսումնառության տարիներին նրա գիտական բացառիկ կարողությունները նկատել էր մեծանուն Հրաչյա Աճառյանը, որը հայրական հատուկ հոգածությամբ հետևեց նրա հետագա բոլոր քայլերին և վստահեց նրան իր գիտական ժառանգության պահպանումն ու հրապարակումը:



Արագ ու մեծ քայլերով է գիտության մեջ առաջ ընթացել Էդ. Աղայանը: Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո ընդունվել է ասպիրանտուրա և 1941 թվին՝ պաշտպանելով թեկնածուական թեզը («Մեղրու բարբառը»), ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ մի քանի տարի անց՝ 1945-ին, «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության համար գիտությունների դոկտորի գիտական աստիճաններ: 1942 թ. արժանացել է դոցենտի, իսկ 1946-ին՝ պրոֆեսորի կոչումների: 1953 թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից, իսկ 1982-ին՝ իսկական անդամ:

Լայն ու բազմազան է Է. Աղայանի գիտական հետաքրքրությունների շրջանակը. ընդհանուր և համեմատական լեզվաբանություն, բարբառագիտություն, քերականագիտություն, հայոց լեզվի և հայ լեզվաբանության պատմություն, բառագիտություն, բառարանագրություն, գրի, ուղղագրության ու ուղղախոսության գործնական խնդիրներ ու տեսություն, արևելագիտության հարցեր, տոմարագիտություն: Սրանք այն ոչ բոլոր բնագավառներն են, որոնցում իր մեծ ներդրումներն ունի Է. Աղայանը:

«Լեզվաբանության հիմունքներ» (Երևան, 1987 թ., առաջին հրատարակությունը՝ «Ընդհանուր լեզվաբանություն», լույս է տեսել 1947 թվին), «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (Երևան, 1967 թ.), «Գրաբարի քերականություն» (հ. I, գիրք Ա, Երևան, 1967 թ.), «Արդի

հայերենի բացատրական բառարան» (I, II հատ., Երևան, 1976 թ.), «Մեղրու բարբառը» (Երևան, 1954 թ.) և այլ մենագրություններ ու գիտական առանձին խնդիրների նվիրված, ինչպես նաև բանավիճային շատ հոդվածներ, յուրաքանչյուրն առանձին իսկ վերցրած, կարող էին հեղինակին մնայուն տեղ ապահովել հայագիտության մեջ:

Աղայանը զբաղվել է նաև հայ տոմարների պատմության հարցերով, որոնց ամփոփումն էր 1986 թվականին հրատարակած «Հայոց տոմարների պատմություն» մենագրությունը, ուր ներկայացված ու բնութագրված են արեգակնային օրացուցային համակարգով ստեղծված հայոց Բուն թվականը, հայոց Մեծ թվականը, հայոց Փոքր՝ Սարկավագաղիր թվականը:

Այսօր էլ իր դասագրքային արժեքը չի կորցրել «Դրվագներ Արևելքի գրականության պատմության» (Երևան, 1974) աշխատությունը, որը ամփոփումն է բանասիրական ֆակուլտետի արևելագիտության բաժնում կարդացած դասախոսությունների:

Է. Աղայանը հեղինակ է նաև բուհական ու դպրոցական դասագրքերի, ինչպես՝ «Լեզվաբանության հիմունքներ» (բուհական համանուն դասընթացի դասագիրք), «Հայոց լեզու» (դասագիրք հայկական դպրոցների IV դասարանի), «Հայոց լեզու» (դասագիրք հայկական դպրոցների V–VI դասարանների): Այս դասագրքերն ունեցել են մի քանի հրատարակություններ և մինչև հիմա էլ լավագույններն են իրենց տեսակի մեջ: Նրա «Լատիներենի քերականություն»-ը ժամանակին լատիներենի լավագույն ձեռնարկներից մեկն է եղել և նշանակալից դեր է կատարել լատիներենի ուսուցման գործում: Գիրքն այժմ էլ չի կորցրել իր արժեքը:

Հանրապետական ու միջազգային բազմաթիվ գիտաժողովներում կարդացած նրա զեկուցումները միշտ էլ մեծ հետաքրքրություն են առաջացրել և բացահայտել հայերենագիտության տվյալ բնագավառի շատ հարցեր և առաջադրել նոր խնդիրներ:

Մեծ է Է. Աղայանի վաստակը նաև գիտական կադրերի պատրաստման գործում: Լեզվաբան-հայագետների մի քանի սերունդներ է աճեցրել նա, որոնցից շատերը հայագիտության հայտնի դեմքեր են, և որոնք վայելել են նրա հոգածությունն ու մարդկային մեծ հմայքը: Տարիներ շարունակ նա եղել է «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական ամսագրի խմբագիրը:

Գիտական ու մանկավարժական գործունեությանը զուգահեռ՝ Է. Աղայանը վարել է նաև հասարակական-վարչական աշխատանքներ. երկար տարիներ՝ 1956-ից 1985 թվականը եղել է Երևանի պետական համալսարանի ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի, զուգահեռաբար նաև՝ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի համանուն բաժնի վարիչ: Կրթության նախարարությունում պաշտոնավարել է որպես բուհերի բաժնի վարիչ, եղել է լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր:

Նկատի ունենալով նրա մեծ ծառայությունները հայագիտության և գիտական կադրեր պատրաստելու գործում՝ ՀՍՍՀ կառավարությունը Է.

Աղայանին ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Ակադեմիկոս Է. Աղայանը 1950-ից 1990-ական թվականների Երևանի խորհրդանիշ դեմքերից մեկն էր: Նման անհատների գոյությունը միշտ էլ հատուկ իմաստ ու գույն է տալիս իր միջավայրին:

ԳԱՂԹՈՒՀԻ ՀԱՆԱՆՅԱՆ